

## **Հարգելի՛ մասնակիցներ,**

Այսօր մենք նշում ենք ականավոր գիտնական, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ալպիկ Ռաֆայելի Մկրտչյանի 80-ամյակը: Թույլ տվեք, նախևառաջ, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորել Ալպիկ Ռաֆայելի Մկրտչյանին՝ ծննդյան 80-ամյակի կապակցությամբ:

Վաստակաշատ գիտնական և ճանաչված մտավորական Ալպիկ Մկրտչյանի կյանքի տարեգրությունը արգասաբեր ու շնորհաշատ գիտնականի կենսագրություն է:

## **Թանկագի՛ն Ալպիկ Ռաֆայելի,**

Անգնահատելի է Ձեր ավանդը գիտության և կրթության բնագավառներում:

Կես դարից ավել Դուք Ձեր կյանքը կապել եք Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հետ, որի կազմում էլ 1980 թվականին հիմնադրեցիք ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտը, ուր մինչ օրս աշխատում եք անմնացորդ նվիրումով:

Ձեր գիտական գործունեության արդյունքը պատկառանք է ներշնչում՝ մի քանի հարյուր գիտական աշխատանք, հեղինակային իրավունքներ և մոնոգրաֆիաներ: Միաժամանակ հանդիսանում եք ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, Ռուսաստանի Դաշնության Ա. Մ. Պրոխորովի անվան ինժեներական գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ, Տոմսկի ճարտարագիտական համալսարանի պրոֆեսոր ...

Անուրանալի է Ձեր ավանդը ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի հիմնադրման գործում: Ձեր ջանքերի շնորհիվ ինստիտուտը կայացել է՝ ձեռքբերելով հանրապետությունում բարձր գիտական վարկանիշ ունեցող գիտական կազմակերպության համբավ: Ձեր համառ ջանքերով ինստիտուտը մասնաճյուղեր է հիմնել Մեղրիում և Կապանում, մասնակցել և ստացել է մեծածավալ միջազգային դրամաշնորհներ, ինչը 90-ականներին թույլ տվեց նորանկախ Հայաստանում պահել բազմաթիվ մասնագետների:

Անուրանալի է Ձեր՝ մեծանուն գիտնականի ներդրումը ֆիզիկայի բնագավառում: Ձեր իսկ հիմնած ակուստաֆիզիկայի բնագավառում 55 տարիների գիտական նվաճումներն ու ձեռքբերումները խոշոր նշանակություն ունեն մոդուլացիոն սպեկտրոսկոպիա, մոդուլացիոն ռենտգենյան սպեկտրոսկոպիա, գամմա-օպտիկա, ակուստապլազմա գիտական ուղղությունների ուսումնասիրությունների և զարգացման գործում:

Իրականացրել եք հսկայածավալ աշխատանք նաև Հայաստանյան գիտության միջազգայնացման ուղղությամբ: Ձեր նախաձեռնությամբ և անմիջական ղեկավարությամբ ստեղծվեցին մի շարք համատեղ լաբորատորիաներ՝ ՌԴ Տոմսկի ճարտարագիտական համալսարանի հետ լաբորատորիան, «Ռենտգենյան Օպտիկա»

հայ-ռուսական գիտահետազոտական լաբորատորիան, հայ-իտալական «XLAB» լաբորատորիան, ՌԴ Կուրչատովյան կենտրոնի հետ «Ռենտգենյան և նեյտրոնների օպտիկա» գիտահետազոտական լաբորատորիան և այլն:

Անհերքելի են Ձեր ջանքերը կրթության կազմակերպման գործում:

Լինելով մեծ գիտնական, հմուտ դասախոս և մարդկային բարձր արժանիքներով օժտված մարդ՝ Դուք հաջողությամբ ղեկավարել եք 50-ից ավել թեկնածուական և 10-ից ավել դոկտորական ստենախոսություններ, Ձեր հարուստ փորձն եք փոխանցել մեկ հարյուրից ավել բակալավրերի, մագիստրոսների և հայցորդների՝ Հայաստանի Հանրապետությունից և Արցախից: Մեփական օրինակով ուսանողներին և ասպիրանտներին ուղորդել եք լինել ճշմարտության և ազգային շահերի նվիրյալ, կյանքում և գիտության մեջ որդեգրել անաչառությունը, սկզբունքայնությունն ու պատասխանատվությունը:

Ձեր գիտական գործունեության առավել կարևորագույն էջերից է գիտական գրականության ստեղծմանն ու հրատարակմանն աջակցումը. Դուք հանդիսանում եք այնպիսի արժեքավոր հանդեսների խմբագրական կոլեգիաների անդամ, ինչպիսիք են «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Ֆիզիկա» և "Электротехника" ամսագրերը:

Ձեր գիտական և գիտակազմակերպական տեսական և արդյունավետ գործունեությունն արժանի է բարձր գնահատանքի: Ձեր հետազոտությունների վերաբերյալ պարբերաբար հանդես են եկել անվանի գիտնականներ, Նոբելյան մրցանակակիրներ՝ Ա. Մ. Պրոխորովը, Ն. Գ. Բասովը, Ռ. Լ. Մյուսբաուերը, ԽՍՀՄ ակադեմիայի նախագահ Ա. Պ. Ալեքսանդրովը, ՀԽՍՀ ակադեմիայի նախագահ Վ. Ա. Համբարձումյանը և այլոք:

Ձեր բեղուն աշխատանքի գնահատականն է Հայաստանի Հանրապետության «Գիտության վաստակավոր գործչի» պատվավոր կոչմանն արժանանալը, Ամենայն հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի անվան «Դավիթ Անհաղթ» մեդալին արժանանալը, «Անանիա Շիրակացու» մեդալով պարգևատվելը:

Ձեր աշխատանքի արդյունավետության վկաներն են բազմաթիվ պետական ու միջազգային պարգևները. արժանացել եք Պրոխորովի անվան մրցանակի, Կուրչատովի անվան մրցանակի, պարգևատրվել եք «Վաստակավոր գյուտարար» կոչումով և մեդալով:

**Միբելի՛ պարոն Մկրտչյան,**

Մեկ անգամ ևս շնորհավորելով՝ Հայաստանի գիտական հանրության և անձամբ իմ անունից երախտագիտությունս եմ հայտնում Ձեզ՝ գիտական արգասաբեր գործունեության համար, և մաղթում քաջառողջություն, ուժ և հարատև բեղուն գործունեություն:

**ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ  
Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**